ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 3-ին, կիրակի.—Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Ապաշխարության տխուր ու մելամաղձոտ օրերին, Փրկչի չարչարանքներին, խաչելության և թաղման պատկերներին հաջորդում է նրա «Հրաշափառ Հարությունը», որի տոնը ամեն տարի, բնության պարթոնքին, մեծ շուքով է նշում Հայ Առաքելական Եկեղեցին:

Գարնանային այս գեղեցիկ օրը Ս. Էջմիածին են եկել բազմաթիվ ուխտավորներ: Նրանք եկել են իրենց աղոթքն ու ուխտը կատարելու և մասնակից լինելու մեր անմահ ու սուրբ պատարագին:

Ժամը 11-ին Հայոց Հայրապետը, շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով, եկեղեցական թափորով Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու պատկական հանդիսավոր ս. պատարագը:

Ավագ խորանի Ս. Սեղանին պատարագիչ Վեհափառ Հայրապետին սպասարկում են Տ. Ներսես եպս. Պոզապալյանը, Տ. Մուշեղ վրդ. Սարգսյանը, Տ. Արամայիս աբեղա Շլուկյանը և սարկավագաց դասը:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ խմբավար Խորեն Մեյխանեջյանի:

Հայրապետական ս. պատարագին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը, սփյուռքահայ ուխտավորներ և պաշտոնական այլ անձինք:

Ս. պատարագին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը:

«Հայր մեր»-ից առաջ, օրվա սուրբ խորհրդի առիթով, Վեհափառ Հայրապետը արտասանում է բովանդակալից և ոգեշունչ մի քարոզ, որը նույն օրը, երեկոյան, ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական այդ քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է ճաշկերույթ, որին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը և մայրավանքի պատասխանատու աշխատողները: Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը բարի մաղթանքներով և հայրական ջերմ խոսքերով շնորհավորում է բոլորին Քրիստոսի Հարության տոնի առթիվ:

Այնուհետև ներկաները, իրենց հերթին, շնորհավորում են Նորին Սրբությանը՝ ցանկանալով նրան առողջություն, կյանքի արևշատություն և նորանոր հաջողություններ Իր եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեության ճանապարհին:



ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ. ԱՊՐԻԼԻ 24. ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՄՈՏ